ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՏԻԳՐԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ

ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

МИКАЕЛЯН РУЗАННА ТИГРАНОВНА

ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРОВ АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
17.00.03 – “Изобразительное искусство, декоративно-прикладное искусство, дизайн”

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ Դավիթ Գրիգորի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն Հովհաննեսի
արվեստագիտության թեկնածու
ՊՈՂՈՍՅԱՆ Գայանե Ռոբերտի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2023թ. դեկտեմբերի 21-ին, ժամը՝ 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. նոյեմբերի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Ասատրյան Ա.Գ.**

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель – доктор архитектуры, профессор
КЕРТМЕНДЖЯН Давид Григорьевич

Официальные оппоненты – член-корреспондент НАН РА,
доктор искусствоведения, профессор
КАЗАРЯН Виген Оганесович
кандидат искусствоведения
ПОГОСЯН Гаяне Робертовна

Ведущая организация – Армянский государственный университет им.Х. Абовяна

Защита диссертации состоится 21-го декабря 2023г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: Ереван, 0019, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 9-го ноября 2023г.

Ученый секретарь специализированного совета,
доктор искусствоведения, профессор **Асатрян А.Г.**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Կինոն՝ 20-րդ դարի մեծագույն նվաճումներից մեկը, ծնեց նոր տիպի դիտադահլիճային շինությունների՝ կինոթատրոնների, ստեղծման անհրաժեշտությունը, որոնց նախագծմամբ և ձևավորմամբ հաճախ զբաղվել են համաշխարհային ճարտարապետության և դիզայնի ոլորտի այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Ռենցո Պիանոն, Ռիչարդ Ռոջերսը, Վալտեր Գրոպիուսը և այլք: Կինոթատրոնների կառուցումը մեծ թափ ստացավ նաև Խորհրդային Հայաստանում, և հայ ճարտարապետներից շատերը՝ Տիրան Երկանյանը, Գևորգ Թամանյանը, Գրիգոր Աղաբաբյանը, Գևորգ Քոչարը, Աննա Տեր-Ավետիքյանը, Սպարտակ Կնդեղցյանը, Արթուր Թարխանյանը և այլք, հեղինակեցին կինոթատրոնների բարձրավեստ և ինքնատիպ նախագծեր:

Կինոթատրոնների ինտերիերներն իրենցից ներկայացնում են շինության ներսում առկա բոլոր հատվածների՝ մասնավորապես դիտադահլիճային, տեխնիկական, սանիտարա-հիգենիկ, հանգստի և ժամանցի, ադմինիստրատիվ և այլ գոտիների ձևաստեղծման հայեցակարգային, տիպաբանական, ոճային ամբողջությունը: Առանձնահատուկ կարևորվում են դիտադահլիճային տարածքի հատակագծային առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ ակուստիկ, էրգոնոմիկ և այլ նրբություններ:

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի կինոթատրոնների շենքերի ինտերիերների, վերջիններիս նախագծման և տեսակների զարգացման ուսումնասիրությանը, նկարագրին, տիպաբանական, հորինվածքային, ոճային ձևաստեղծման խնդիրների վերլուծությանը և համեմատությանը:

Հայաստանյան մեկդարյա կինոմշակույթը, որի հոբելյանը նշվում է այս տարի, առ այսօր կազմում է հայ հասարակության կրթական, ժամանցային կարևոր բաղադրիչներից մեկը: Կինոթատրոնային շենքերի կարևոր մասը կազմող ինտերիերների և դրանց զարգացման ուսումնասիրությունը գիտահետազոտական առումով մինչ օրս չի իրականացվել այնպիսի ծավալով և խորությամբ, որը թույլ կտար ընդհանրական և հիմնավոր պատկերացում կազմել դրանց ոճային, ձևաստեղծման, ինչպես նաև այլ հատկանիշների և առանձնահատկությունների վերաբերյալ:

Հիմնվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. ծրագրային դրույթների՝ մասնավորապես զբոսաշրջության և մշակույթի ոլորտի զարգացման դերի կարևորության և շեշտադրման վրա՝ կարելի է փաստել, որ կինոթատրոնների ուսումնասիրումը և դրանց արդիականացումը, որպես ներքին և արտաքին ռեկրեացիոն ժամանցի հաստատությունների, այժմեական նշանակություն ունի վերջինների աջակցման համար:

Կինոթատրոնների ինտերիերների արդիականացումը, վերականգնումը և նոր կինոթատրոնների ստեղծումը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ Հայաստանում անցկացվում է ամենամյա «Ոսկե Ծիրան» հեղինակավոր միջազգային կինոփառատոնը, որի ընթացքում մշտապես առկա է պատշաճ և ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած կինոդիտահլիճների անհրաժեշտությունը:

Նշենք, որ Հայաստանի կինոթատրոնների 70 տոկոսը գտնվում է անհետացման եզրին, որոշ կինոթատրոններ՝ այդ թվում՝ «Նաիրի» կինոթատրոնը, դադարեցրին իրենց գործունեությունը մեր հետազոտական աշխատանքի ընթացքում, ինչը մեկ անգամ ևս փաստում է սույն աշխատության կարևորությունը: Անհետացող անցյալի ժառանգության վերջին պատառիկները որսալու, դրանց մեծարժեքությունը և կարևորությունը ի ցույց դնելու մի փորձ կարելի է համարել սույն ատենախոսությունը:

Ատենախոսության **նպատակն է** համակողմանիորեն ուսումնասիրել Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը:

Կարևորվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել Հայաստանի կինոթատրոնների ինտերիերի պատմական և տեսական բնույթի հարցերն ու տեխնոլոգիական առանձնահատկությունները՝ միջազգային օրինակների համատեքստում:
- Կատարել Հայաստանի կինոթատրոնների ինտերիերի փաստագրավերլուծական ուսումնասիրությունը՝ համաձայն ինտերիեր դիզայնի նախագծամեթոդական սկզբունքների՝ բաժանելով այն զարգացման փուլերի և ըստ ժամանակահատվածների:
- Համեմատական վերլուծության ենթարկել Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը՝ դիտարկելով դրանք միջազգային կինոթատրոնների ինտերիերների դիզայնի համատեքստում:

Թեմայի մշակվածության աստիճանը: Տվյալ թեման երբևէ չի հանդիսացել հիմնավոր հետազոտության առանձին առարկա և չի ուսումնասիրվել գիտական պատշաճ մակարդակով: Կինոթատրոնների ինտերիերների նկարագրությունները կատարվել են հպանցիկ, առանց մանրամասների նկարագրության ու վերլուծության և հանդիսացել են ճարտարապետական նկարագրի եզրափակիչ կամ օժանդակ մաս: Լույս են տեսել հոդվածներ, գրվել են թեմային որոշակի առնչություն ունեցող ատենախոսություններ, որոնցում ճարտարապետական տեսքին կից կամ օժանդակ համարվող այդ բաղադրիչի վերաբերյալ կատարվել են դիտարկումները, որոնք, սակայն, չի կարելի համարել բավարար և համապարփակ:

Ատենախոսության ուսումնասիրվածության առումով հարկ է նշել, որ Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնի և վերջիններիս առանձին մեթոդական ուսումնասիրության վերաբերյալ որևէ հրատարակություն առկա չէ: Հրապարակի վրա եղած ուսումնասիրություններն իրենցից ներկայացնում են ընդհանուր առմամբ ճարտարապետությանը վերաբերվող կամ ընդհանուր տիպաբանությունն ուսումնասիրող աշխատություններ, որոնցից կարևորագույններն են Ն.Ավագյանի «Перспективы формирования архитектуры кинотеатров в РА» («ՀՀ կինոթատրոնների ճարտարապետության ձևավորման հեռանկարները» թեկնածուական ատենախոսությունը, Երևան 2009) և Է.Տիգրանյանի «Հասարակական շենքերի ճարտարապետական

նախագծման հիմունքները» (Երևան, 1978 և 1989) մասնագիտական դասագիրքը:

Ն.Ավագյանի ատենախոսության մեջ, որը նվիրված է կինոթատրոնների հետագա զարգացման ճարտարապետական միջոցառումներին, այդուհանդերձ, ընդգրկված չէ դահլիճների ինտերիեր դիզայնը:

Է.Տիգրանյանի վերոնշյալ դասագիրքը նվիրված է հիմնականում հասարակական շինությունների տիպաբանության տեսությանը, որում ընդգրկված են նաև Հայաստանի երկու կինոթատրոնի օրինակներ: Սակայն վերջիններիս ինտերիերի դիզայնին միայն մի քանի տողով հակիրճ անդրադարձ է կատարվել:

Նույնը պետք է ասել «Էկրան» ամսագրում լույս տեսած մի քանի հոդվածների վերաբերյալ: Այս նույն խմբին կարելի է դասել նաև Մարտին Հարությունյանի «Բեմական նորագույն տեխնոլոգիաների հնարավոր կիրառումը Հայաստանի դիտադահլիճային շինությունների վերակառուցումներում» վերնագրով ատենախոսությունը (սեղմագիրը՝ Երևան, 2013 թ.), որը որպես մենագրություն հրատարակվել է (Երևան, 2016):

Ատենախոսության մեջ օգտագործվել է կինոթատրոնների ճարտարապետության հետ առնչվող բազմաքանակ մասնագիտական գրականություն, այդ թվում՝ В.В.Щербаков, В.Е.Быков, Г.К.Белинин, Н.Былинкин. «Архитектура кинотеатров» (1955): Մեծ կարևորություն է տրվել ստորև հաջորդաբար նշված աշխատություններում առկա տեսական դրույթներին և ներմուծած զուգահեռներին՝ В.Щербаков. «Кинотеатры» (1948) В.Арутюнян, М.Асратян, А.Меликян. «Ереван» (1968), А.Григорян, М Товмасян. «Архитектура советской Армении» (1986) և այլն: Ինչպես նաև գերակա տեղ է զբաղեցնում ինտերիերի դիզայնին վերաբերվող գրականությունը, մասնավորապես В.Ф.Рунге. «История дизайна науки и техники» (2007), C.V.Ufellen. «Cinema Architecture» (2009), П.Боде. «Современные кинотеатры» (1964), Ш.Фиелл, П.Фиелл. «Энциклопедия дизайна: концепции, материалы, стили» (2008):

Առանձնահատուկ կարևորություն ունեն Հայֆիլմի կայացման գործում առանցքային դեր ունեցող գործիչների հուշագրությունները, որոնք գրքի տեսքով լույս են տեսել և տվյալ ուսումնասիրության շրջանակներում լույս սփռել հայկական կինոթատրոնների զարգացման և կայացման ճանապարհը պարզաբանելու և նկարագրելու հարցում: Այդպիսիք են Համո Բեկնազարյանի հուշերը ամփոփող աշխատությունը՝ А. Бекназарян, «Записки актера и кинорежиссера» (1968), ինչպես նաև Դանիել Դզնունու «Ուրվագիծ հայկական կինեմատոգրաֆիայի պատմության» (1961) աշխատությունը: Ուսումնասիրվել են նաև մամուլը («ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ», «Խորհրդային արվեստ» ևն):

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ առաջին անգամ՝

- վերլուծվել են Հայաստանի կինոթատրոնների կարևորագույն օրինակները:
- Հայկական կինոթատրոնները խմբավորվել են ըստ ստեղծման ժամանակագրության, նշանակության և պահպանման վիճակի:

- Ուսումնասիրվել են Հայաստանի կինոթատրոնների ինտերիերների տիպաբանական, հորիվածքային, հայեցակարգային, էրգոնոմիկ, ակուստիկ զարգացման հարցերը՝ առաջնորդվելով նմանատիպ ուսումնասիրությունների միջազգային փորձով ու ձևավորված մոտեցումներով:
- Պարզաբանվել են Հայաստանի կինոթատրոնների տեխնոլոգիական արդիականացման և զարգացման տեսլականները ինտերիերում:
- Հայաստանի կինոթատրոնների ինտերիերային լուծումներն ու դրանց առանձնահատկությունները համեմատվել և դիտարկվել են համաժամանակյա օտարերկրյա (Եվրոպա, ԱՄՆ, Խորհրդային Միություն և այլն) օրինակների հետ:
- Ըստ ժամանակագրական առանձնահատկությունների արժևորվել են կինոթատրոնների առավելությունները և թերությունները:
- Հայտնաբերվել և գիտական շրջանառության մեջ են դրվել են որոշ կինոթատրոնների վերաբերյալ փաստագրական արխիվային նյութեր, մանրամասներ:
- Համապարփակ կերպով ուսումնասիրվել և ներկայացվել են 2012-2019թթ. ստեղծված արդի կինոթատրոնները:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսության մեջ արծարծվող հարցերի և դրանց լուծումների փնտրտուքը գործնականում կաջակցի կինոթատրոնների ինտերիերներում ժամանակակից տեխնոլոգիների ներդրման առանձնահատկությունների և խնդիրների բարելավմանը, արդի ոճային հորինվածքի ստեղծմանը և կատարմանը, լքված կինոթատրոնների վերագործարկման տեսլականի ուրվագծմանը և արդիականացմանը, ինչը ենթադրվում է ինտերիերի տիպաբանական, հորինվածքային, ոճային, ակուստիկ և այլ խնդիրների դիտարկումը:

Ուսումնասիրությունը կարևոր և այժմեական է ոչ միայն առկա ժառանգության գիտահետազոտական ուսումնասիրության և արժևորման, կորսված կինոթատրոնների ինտերիերների վերաբերյալ հնարավորինս համապարփակ տեղեկատվության հավաքման և վերլուծության առումով, այլև կնպաստի վերջինիս հենքի վրա ապագայում ստեղծվելիք աշխատանքների (կինոթատրոնների ինտերիերի գեղազարդման և ոճավորման, վերականգնման և այլն) գրագետ կազմակերպմանը, տեսական և մասնագիտական առումով ավելի քաջատեղյակ մասնագետների պատրաստմանը: Տարատեսակ չափանիշների փոփոխման արագությունը պահանջում է պարբերաբար արդիականացնել նմանօրինակ շինությունների ինտերիերային լուծումները՝ հարմարեցնելով դրանք նորարարական տեխնոլոգիական պահանջներին:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են «Պատմություն և մշակույթ», «Տարեգիրք», «Գիտական Արցախ», «Международный журнал гуманитарных и естественных наук», «Научный

Аспект» գիտական պարբերականներում տպագրված հոդվածներում, զեկուցվել են ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնհինգերորդ գիտական նստաշրջանում, Երիտասարդ արևելագետների քառասունմեկերորդ և «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն»՝ նվիրված առաքելական եկեղեցու Շիրակի թեմի 10-ամյակին նվիրված գիտաժողովներում, հրատարակվել են դրանց նյութերի ժողովածուներում:

Աշխատության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից (Գլուխ առաջին՝ «Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի կինոթատրոնների և դրանց ինտերիեր դիզայնի վերաբերյալ», Գլուխ երկրորդ՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը մինչև 1970թ.», Գլուխ երրորդ՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1970 թ.-ից մինչև 1991թ.» և Գլուխ չորրորդ՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1991թ-ից առ այսօր»), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, նշված են նպատակն ու խնդիրները, գնահատված է ուսումնասիրվող թեմայի գիտական մշակվածության աստիճանը, շեշտված է աշխատության գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(պատմական ակնարկ)

Ուսումնասիրվել են կինոթատրոնների սկզբնավորման հարցերը, զարգացման փուլերը, հայկական, խորհրդային և համաշխարհային իրականության մեջ, ինչպես նաև տիպաբանական առանձնահատկությունները: Առաջին գլուխը բաղկացած է հինգ ենթագլուխներից:

Պատմական ակնարկ կինոթատրոնների զարգացման վերաբերյալ: **Միջազգային իրականությունը:** Առաջին ենթագլուխը վերաբերում է կինոթատրոնների ստեղծման պատմությանը, մանրամասնությամբ ներկայացվում է դրանց ժամանակագրական և փուլային տարբերությունները և փոփոխությունները: Մասնավորպես շեշտադրվում է առաջին կինոթատրոնների սերտ նմանությունը այլ դիտադահլիճային շինությունների հետ, ինչպիսինն է թատրոնի դահլիճը և թե ինչպես հետզհետե էկրանային արվեստի զարգացումը հանգեցրեց նաև կինոթատրոնային շենքի և ինտերիերի լուծումների և դիզայնի առանձնահատկությունների մշակմանը:

Պատմական ակնարկ կինոթատրոնների զարգացման վերաբերյալ: Խորհրդային իրականությունը: Երկրորդ ենթագլխում դիտարկվում են խորհրդային կինոթատրոնների ինտերիեր դիզայնի հարցերը, որոնք

սերտորեն կապված են հայկական կինոթատրոնների կառուցման և զարգացման հետ, անդրադարձ է կատարվում խորհրդային տարբեր փուլերում կառուցված կինոթատրոններին, ինչպիսիք են Մոսկվայի «Ուդարնիկ», Պետերբուրգի «Գիգանտ», Թբիլիսիի «Ռուսթավելի», Ալմա-Աթայի «Արման», Ստալինգրադի «Հաղթանակ» և այլն:

Պատմական ակնարկ կինոթատրոնների զարգացման վերաբերյալ: Հայկական իրականությունը: Երրորդ ենթագլուխը նվիրված է հայկական կինոթատրոնների ստեղծման և զարգացման պատմությանը, ուսումնասիրման ընթացքում դիտարկվել են բազմաթիվ արխիվային նյութեր, ինչի արդյունքում առաջին անգամ բացահայտվել են հետաքրքրական մանրամասներ հայկական առաջին կինոթատրոնների ստեղծման, զարգացման, ինտերիեր դիզայնի մասին:

Կինոթատրոնային մշակույթը Հայաստան ներթափանցեց դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Երևանում առաջին կինոցուցադրումները տեղի են ունեցել 1899-ին փոքրիկ փայտաշեն ամբարում, որը գտնվում էր քաղաքային ոստիկանության շենքի բակում: Հետաքրքրական են Համո Բեկնազարյանի հուշերը՝ կապված այս կինոթատրոնի հետ. «Ուսուցիչը ինձ դասից ազատեց և ես վազեցի դեպի քաղաքի կենտրոնը, որտեղ գտվում էր ոստիկանական վարչությունը: Այնտեղ բակի փայտյա սարայում, Երևանում առաջին անգամ բացվել է «իլյուզիոն» և ինչպես ասում էին «կենդանի պատկերներ» էին ցուցադրում: Տոմսը արժեր 10 կոպեկ...

«Իլյուզիոն»-ը լեփ լեցուն էր: Հասարակ փայտյա նստարանների վրա խռնվել էին երեխաներ ու մեծահասակներ...»[1]:

Այդ տարիներին Երևանում դեռ երկաթուղի չկար, երկաթուղին անցկացվեց 1901թ.-ին, իսկ կինոյի առաջին ցուցադրումը տեղի ունեցավ դրանից երկու տարի առաջ: Կարելի է ասել, որ հենց այս ամբարը դարձավ Երևանի առաջին «կինոթատրոնը»: Այս շրջանում Հայաստանում առկա էին մի շարք կինոթատրոններ. Երևանում «Ապոլլո», «Իլյուզիոն», «Ավանեսովի և Խաչատուրովի» փայտաշեն ամառային կինոթատրոները, Ալեքսանդրապոլում՝ «Էրատո» կինոթատրոնը: Եվս երկու կինոթատրոն գործում էին Կարսում և Սարիղամիշում (հայերեն անվանումը՝ Եղեգնիկ, գտնվում էր Կարսի մարզում):

20-րդ դարի տասական թվականներին Երևանում կառուցվում են Ջանփոլադյանի և «Ապոլլո» կինոթատրոնի և հանդիսատեսային շենքերը: Առաջին շինությունը կառուցված էր քաղաքային ակումբի շենքի տեղում և ծառայում էր որպես թատրոնի և կինոյի շենք՝ «Իլյուզիոն» անվանումով (ճարտարապետ՝ Ե.Բոգուշևիչ): «Իլյուզիոն»-ը գործում էր 1909-ից, իսկ «Ապոլլոն» բացվեց 1910 թ. հոկտեմբերին: Երևանի երկու կինոթատրոններն էլ քաղաքի ժամանցի հիմնական կետերն էին, ըստ էության, բոլոր քաղաքացիները տարվա մեջ գոնե մեկ անգամ այցելում էին այս կինոթատրոնները, ինչը բացատրվում էր նախևառաջ կինոթատրոններում լավ

---

[1] А. Бек-Назарян, Записки актера и кинорежиссера (на армянском языке), изд. Ереван, «Айастан»,1968, с. 27-28:

ֆիլմային ծրագրի ներկայացմամբ: Երկու կինոթատրոնները ցուցադրում էին համաշխարհային կինոպրեմիերաները: «Իլյուզիոն»-ում դեռևս 1909-ին ցուցադրվում էին «Սալոմե», «Արլեզուհին» ֆիմերը: «Ապոլլոյում» ցուցադրվել են «Ամենայն հայոց կաթողիկոս Մաթևոս Երկրորդի թաղումը», «1812 թվական», «Խանդ և մահ», «Տրոյայի անկումը»: «Ապոլլո» կինոթատրոնում ցուցադրվում էին նաև մանկական ֆիմեր: «Ապոլլոն» և «Գրանդ Իլլյուզիոնը» գտնվում էին գրեթե դեմ դիմաց, այժմյան Հանրապետության հրապարակի հարավային հատվածում: Ֆինանսական դժվարությունների պատճառով կինոթատրոնների առաջին տերերը վաճառում են կինոթատրոնները: Նոր կապալառուները թարմացնում են դահլիճի ինտերիերները, կատարում են էրգոնոմիկ փոփոխություններ՝ դրա հետ մեկտեղ փոխելով նվագախմբի կազմը և գնային քաղաքականությունը: «Իլյուզիոն»-ի հրդեհից հետո 1910թ. փետրվարին Էրիվանի նահանգի ղեկավարությունը հաստատում է կինոթատրոնի վերահատակագծված նախագիծը: Ըստ նոր հատակագծի՝ կինոթատրոնի բոլոր սենյակները ընդլայնվում են, ինտերիերները ստանում են շքեղ ձևավորում, ամենայն մանրամասնությամբ մշակվում են հակահրդեհային և տարհանման սխեմաները, ինչպես նաև տեղադրվում է նորագույն տեխնիկա: Այս վերականգնման աշխատանքերը կատարվում են «Իլյուզիոն»-ի սեփականատեր Վ.Գագուայի միջոցներով:

Այս երկու կինոթատրոնները գտնվում էին պարբերական մրցակցության մեջ: Գրական աղբյուրներից մեկում պահպանվել է հայտարարություն «Ապոլլո» կինոթատրոնում կազմակերպվող Նոր տարվա մանկական հանդեսի՝ «եղևնու» և պարերի տոնակատարության մանրամասներով, որտեղ նշվում է տոնածառի համար թանկարժեք խաղալիքների և ձևավորումների, բազմագույն էլեկտրական լուսավորվող ծաղկաշղթաների ձեռքբերման մասին, ինչպես նաև կինոթատրոնի ճեմասրահում կազմակերպվող շահումներով խաղերի մասին:

1912թ. «Ապոլլո» կինոթատրոնի կողքին բացվում է «Աննոնա» շքեղ ճաշարանը, որը հավանաբար սպասարկում էր հանդիսատեսին: «Ապոլլո» կինոթատրոնի շենքի ճակատին էր գտնվում Երևանի քաղաքային ժամացույցը (այժմ գտնվում է Երևանի պատմության թանգարանում), որը ձեռք էր բերվել 1891-ին՝ քաղաքային հանգանակության միջոցներով: Ինչ վերաբերում է Ջանփոլադյանի շենքին, ապա վերջինիս ճեմասրահից պահպանվել են լուսանկարներ: Դասական ոճով իրականացված ճեմասրահը վերանորոգվել է Խորհրդային Հայաստանի տարիներին:

Կինոթատրոնների կառուցումը զանգվածային բնույթ ստացավ Հայաստանի խորհրդայնացումից հետո: 1922թ. մայիսին ՀԽՍՀ ժողկոմխորհի որոշմամբ պետականացվում են «Ապոլլո» և Ալեքսանդրապոլի «Էրատո» կինոթատրոնները՝ վերջիններս վերանվանվում են՝ ստանալով «Պրոլետար» և «Շիրակ» անվանումները: «Պրոլետար» կինոթատրոնը ուներ նաև ամառային կինոդահլիճ, ևս մեկ կինոթատրոն գործում էր բանվորական ակումբում: Երևանում գործում էր նաև «Աշխատանք» կոչվող ամառային և ձմեռային դահլիճներ ունեցող կինոթատրոնը: Եվս մեկը գործում էր այսօրվա կենտրոնական բանկի տեղում՝ «Խորածառի» կամ խորհրդային ծառայողի ակումբում: Բացի դրանից, ֆիլմեր էին ցուցադրվում նաև Նոր Բայազետում,

Ղարաքիլիսայում, Ստեփանավանում:

Չորրորդ ենթագլխում ուսումնասիրվում է կինոթատրոնների էրգոմոնիկ, ակուստիկ, տեխնիկական հագեցվածության, լուսային և վերջապես տիպաբանական խնդիրները տարբեր ժամանակահատվածներում: Կինոթատրոններն ըստ տարողության լինում են միադահլիճ, երկդահլիճ, եռադահլիճ, մուլտիպլեքս, մեգապլեքս, իսկ ըստ հատակագծման բաժանվում են ուղղանկյուն, սեղանաձև, օվալաձև, սղոցաձև և ամֆիթատրոնային տիպերի: Ըստ կառուցման տիպերի, կինոթատրոնները բաժանվում են առանձին կանգնած, ներկառուցված և արտակառուցված տիպերի: Ներկայացված բոլոր տիպոլոգիական բաժանումներին հաջորդում են հստակ օրինակներ, ինչպես համաշխարհային, այնպես էլ հայկական իրականությունից:

Կինոթատրոնների միջազգային փորձը և առաջատար օրինակները: Հինգերորդ ենթագլխում խոսվում է համաշխարհային կինոթատրոնների ինտերիեր դիզայնի լավագույն օրինակների մասին, նորագույն մոտեցումների, յուրօրինակ և չկրկնվող լուծումների մասին: Հետաքրքրական է հատկապես ապագայի կինոթատրոնի հայեցակարգը, որը ենթադրում է այսպես կոչված «մեկ մարդու կինոթատրոնի» ստեղծումը և զարգացումը: Օրինակ, Ասիայում և ԱՄՆ-ում մշակվել են հատուկ «VR» տիպի կինոթատրոններ, որոնք իրենցից ներկայացնում են մոդուլային աթոռներ և հատուկ տիպի ակնոց, որը հնարավորություն է ընձեռում դիտման անկյունը դարձնել անսահմանափակ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ ՄԻՆՉԵՎ 1970Թ.

Խորհրդային Հայաստանում կինոթատրոնների կառուցման ակտիվ փուլը սկսվում է 1920-ականների առաջին հնգամյակում, երբ առաջնահերթություն էր համարվում իշխող կուսակցության գաղափարների քարոզումը, որի լավագույն միջոց ընտրվեց կինոն: Հետագայում քարոզչական նշանակությունից բացի կինոթատրոնները ձեռք են բերում մշակութային նշանակություն և շատ արագ դառնում հայ հասարակության ժամանցի ամենասիրելի վայրը: Ճարտարապետների և դիզայներների առջև դրված ինտերիեր դիզայնի խնդիրները բազմազան էին և ոչ այնքան դյուրին. տարիների ընթացքում կատարելագործելով հմտությունները՝ հայ մասնագետները էլ ավելի հարմարավետ և կատարյալ էին դարձնում դիտադահլիճային կառույցները: Հատկապես այս փուլում են կառուցվում երևանյան հանդիսատեսին հարազատ և սիրելի «Մոսկվա», «Նաիրի», «Հայրենիք», «Կոմիտաս» և մի շարք այլ կինոթատրոններ:

Երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ «**Նաիրի կինոթատրոնի ինտերիեր դիզայնը**», նվիրված է Խորհրդային Հայաստանում առաջինը շահագործման հանձնված «Նաիրի» կինոթատրոնի ինտերիեր դիզայնին: Համառոտ պատմական ակնարկից հետո անդրադարձ է կատարվում կինոթատրոնի առաջին շենքին, ինտերիեր դիզայնի մանրամասներին, հատակագծային առանձնահատկություններին: Ներկայացվում են «Նաիրի» կինոթատրոնի

ներկա շենքի մանրամասները հետևյալ բաժանումներով. ճարտարապետություն, հատակագիծ և գոտևորում, օվալաձև ճեմասրահի մանրամասները, որը հատկապես կարևորվում է այն հանգամանքով պայմանավորված, որ շուրջ 30 տարի փակ լինելուց հետո վերջապես վերաբացվեց, ինչը մեզ հնարավորություն ընձեռեց մանրամասն ուսումնասիրել այն, հատկապես կարևորվելով այն հանգամանքը, որ երկրորդ շենքի կառուցումից ի վեր, կինոթատրոնի այս հատվածը գրեթե փոփոխությունների չի ենթարկվել: Հատկապես հետաքրքրական են օվալաձև ճեմասրահի և մեծ դահլիճի ոճական լուծումները, որոնք առ այսօր հիացնում են:

Երկրորդ ենթագլխում դիտարկվում է Ալեքսանդրապոլի (այժմ՝ Գյումրի) «Հոկտեմբեր» (1927) կինոթատրոնը: Գտնվելով Գյումրիի Վարդանանց հրապարակում՝ կինոթատրոնը հաջողությամբ ներդաշնակում է հոյակերտ Յոթ Վերք և Սուրբ Ամենափրկիչ եկեղեցիների հետ և ամփոփում վերը նշված հրապարակը հարավային կողմից: Այժմյան կինոթատրոնի շենքը վերակառուցված տարբերակն է, քանի որ 1988թ. աղետալի երկրաշարժից հետո կինոթատրոնը նույնպես ավերվեց և նույն ճարտարապետական նախագծով վերկառուցվեց միայն 1996ին: Կինոթատրոնը ռուսական նեոդասական ոճի և հայկական ազգային ճարտարապետական տարրերի գեղեցիկ համադրություն է: Ինտերիերի նկարագրությունները կատարելիս, ըստ էության, կարելի է հիմնվել միայն 1950-ականների և 2000-ականների վերանորոգման արդյունքների վրա, քանզի նախնական ինտերիերից ոչինչ չի պահպանվել: Մանրամասն անդրադարձ է կատարվում ոճային, կոմպոզիցիոն, լուսային լուծումներին, տրվում է գնահատական այսօրվա կինոթատրոնի ինտերիերի ոճային երկվությանը:

Հաջորդիվ խոսվում է թերևս ամենահայտնի՝ «Մոսկվա» կինոթատրոնի մասին: Առաջին անգամ արխիվային նյութերից դուրս են բերվել այնպիսի հոդվածներ, որոնց հիման վրա հնարավորություն է ընձեռվում ամենայն մանրամասնությամբ պատկերացում կազմել կինոթատրոնի առաջին ինտերիերի վերաբերյալ, ինչպես նաև 1985թ. վերակառուցման և փոփոխությունների մասին: Այս ամենի հիման վրա կարելի է հպարտորեն եզրակացնել, որ Խորհրդային Միությունում «Մոսկվա» կիոթատրոնն առաջինն էր, որ ուներ հստակ, մտածված, ոճավորված ինտերիեր դիզայն:

Խոսելով «Հայրենիք» կինոթատրոնի մասին, որի շենքը կանգուն է, սակայն չի օգտագործվում ըստ իր գործառույթի, կարևորվում են վերջինիս ոճական առնչությունները հայկական միջնադարյան հոգևոր ճարտարապետության հետ, մանրամասն նկարագրվում է կինոթատրոնի ինտերիերի առանձնահատկությունները: Շատերին սակավ հայտնի «Ջերմուկ» կինոթատրոնի և վերջինիս ինտերիերի ուսումնասիրությունը, որ կատարվում է առաջին անգամ, նոր և հետաքրքրական փաստեր առաջ բերեց տվյալ ժամանակաշրջանի հայկական կինոթատրոնային ինտերիերի առանձնահատկությունների բացահայտման առումով: Բանն այն է, որ կինոթատրոնի ներսույթը, հարդարանքի մանրամասները, բարձրառոճ զարդաքանդակները, բացառությամբ՝ կահույքի, գրեթե նույնությամբ պահպանվել են կառուցումից ի վեր:

Նախորդ դարի 60-ականներին եկավ տիպային ճարտարապետության գերիշխանության փուլը, որի արդյունքում հաճախ անտեսվում էր ինքնատիպությունը և էսթետիզմը: Սակայն ստեղծագործական նման պայմաններում հայ ճարտարապետները դարձյալ կարողացան գրանցել հաջողություններ: 1961-ին Ա.Թարխանյան, Ս.Խաչիկյան և Հ.Պողոսյան ճարտարապետական հայտնի եռյակը՝ Է.Արևշատյանի և կոնստրուկտոր Ս.Բաղդասարյանի հետ «Հայպետնախագիծ» ինստիտուտում կատարեցին համատեղ լայնամասշտաբ նախագիծ: Այդ կինոթատրոնները տեղադրվեցին Երևանի և մարզերի, քաղաքների վարչական շրջաններում: Շնորհիվ արխիվային նյութերի բացառիկ լավ պահպանվածության և վերջիններիս հանգամանալից ուսումնասիրության՝ հնարավորություն ստեղծվեց արդեն գոյություն չունեցող և անխնա ոչնչացված տիպային կինոթատրոնների ուրվականը վերականգնել:

Հաջորդ թեման Գևորգ Մուշեղյանի խմբի հեղինակած «Լալվար» կինոթատրոնն է, որը առաջին արտակառուցված հայկական կինոթատրոնն էր: Երկրորդ գլուխն ամփոփվում է հայկական մոդեռնիզմի գլուխգործոց համարվող «Մոսկվա» Կինոթատրոնի ամառային կինոդահլիճի ինտերիերի և էքստերիերի հանգամանալից վերլուծությամբ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 1970Թ.-ԻՑ ՄԻՆՉԵՎ 1991Թ.)

1970թ. բեկումնային դարձավ դիզայնի և ճարտարապետության հայեցակարգի, ոճական առանձնահատկությունների փոփոխման համար: Նոր երիտասարդական սերունդը այլևս վերջնականապես հրաժարվեց ազգային նեոդասական ոճից՝ ստեղծագործելով մոդեռնիստական հոսանքների տարբեր ուղղություններով:

Մոդեռնիզմը իր հետ բերեց համարձակություն, պլաստիկ ձևերի ազատություն, հանդուգն և հավակնոտ նախագծեր և մոնումենտալություն: Տիպային կինոթատրոններին զուգահեռ, ինչպես օրինակ երկու կին ճարտարապետների կողմից նախագծված «Դիլիջան» կինոթատրոնն էր, նախագծվեց «Ռոսիա» կինոթատրոնը՝ Երևանի դիմագիծն ապահովող ինքնատիպ շինություններից մեկը:

Իր կառուցման օրից «Ռոսիա» կինոթատրոնի ճարտարապետությունը և ներքին լուծումները հետաքրքրական են ոչ միայն հայ մասնագետների, այլ նաև օտար ուսումնասիրողների համար: Դա բացատրվում է նրանով, որ կինոթատրոնի շենքն իրականացվել է ինքնատիպ և համարձակ հորինվածքային ու ծավալատարածական լուծումներով, ինչպես նաև այն իրենից ներկայացնում է հայկական եկեղեցական ճարտարապետության և մոդեռնիստական ոճի միաձուլում: «Ռոսիա» կինոթատրոնը Հայաստանում կառուցված ամենախոշոր համալիրներից էր: Իր մասշտաբներից բացի, կառույցն աչքի է ընկնում համարձակ և նորարարական լուծումներով: Ըստ էության, կառույցն իրենից ներկայացնում էր ճարտարապետա-քանդակային սինթեզ: Արտաքին պլաստիկ լուծումները ի ցույց էին դնում խորհրդահայ մոդեռնիստական ճարտարապետությանը բնորոշ հատկանիշներ:

Հետաքրքրական օրինակ է Դիլիջան քաղաքի համանուն կինոթատրոնը՝ դարձյալ կատարված Հայպետնախագիծ ինստիտուտի կողմից: Հատկապես հետաքրքրական է կինոթատրոնի կինոդահլիճը, որը զարմանալիորեն լավ է պահպանվել ի տարբերություն կինոթատրոնի այլ հատվածների: Ոճական առումով կինոթատրոնի ինտերիերը հարում է մոդեռնիստական և ռացիոնալիստական ոճին: «Դիլիջանի» կինոդահլիճն այժմ գտնվում է հարաբերականորեն բարվոք վիճակում:

Իր նրբագեղությամբ և զուսպ ձևերով էջմիածին քաղաքում առանձնանում է «Գարուն» կինոթատրոնը, որի նախագծի հեղինակներն են Ս.Գուրզադյանը և Մ.Ալեքսանյանը: Կինոթատրոնը գտնվում է Կոմիտասի այգու հարևանությամբ: Նախագիծը Ճարտարապետների միության կողմից արժանանում է «1982 թվականի լավագույն կառույց» խորհրդային մրցանակի: Կարևոր է նշել, որ այս գողտրիկ կինոթատրոնն իր լուծումներով կապ է ստեղծում ինտերիերի և էքստերիերի միջև՝ յուրահատուկ կերպով սինթեզելով դրանք:

Խորհրդային Հայաստանի թերևս վերջին կառուցված կինոթատրոնը կինո «Հայաստանն» է: Պատմության ջրբաժանի, մեծ հակասական գաղափարների աշխույժ փոլում կառուցված կինոթատոնը կրում էր իր ժամանակի դրոշմը: Անսասան թվացող արժեքներն այլևս կասկածի տակ էին դրվում, երիտասարդ ստեղծագործողների ավյունը այլևս միտված էր ազատության խորհդանշացմանը և արտահայտմանը: «Հայաստան» կինոթատրոնը գտնվում է հարավ-արևմտյան թաղամասում Վ. Զատիկյանի և Սբ. Երրորդություն եկեղեցու զբոսայգիների վերջնամասում: Կառուցվել է 1987թ. «Հայպետնախագիծ» ինստիտուտի կողմից՝ տիպային նախագծով և հանդիսանում է Խորհրդային Հայաստանում կառուցված վերջին կինոթատրոնը: Կինոթատրոնի վերաբացումը իրականացավ 2015-ին:

Առաջին անգամ անդրադարձ է կատարվում կինոթատրոնի ներկայիս վերակառուցված տարբերակին, որպես նորույթ և բացառիկ երևույթ առհասարակ հայ ինտերիեր դիզայնի բնագավառում պետք է հիշատակել, որ կինոթատրոնի ինտերիերների ձևավորման վրա աշխատել են նաև աշխարհահռչակ դիզայներներ «Ֆերրարի» ընկերությունից:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 1991 Թ.-ԻՑ ԱՌ ԱՅՍՕՐ

Գլխում առաջին անգամ ուսումնասիրության առարկա են դառնում անկախ Հայաստանի շրջանում կառուցված կինոթատրոնները, որոնք ներկառուցված տիպի էին, ինչը նորություն չէր հայկական կինոթատրոնների պարագայում, օրինակ այդպիսին էին «Նաիրին» կամ «Պիոները», սակայն այն տարբերությամբ, որ անկախության շրջանի կինոթատրոնները կառուցված են ժամանցային և առևտրի կենտրոններում, հաճախ չունեն հստակ բաժանում այլ առևտրի գոտիներից, ինչը նոր լուծումներ է ենթադրում: «Սինեմա Սթար», «Կինոպարկ», «Սյունիք» կինոթատրոնները նոր թարմություն, ժամանակի շունչը բերեցին նորանկախ Հայաստանի կինոթատրոնների պատմության մեջ: Սրա հետ մեկտեղ պետք է ցավով արձանագրել, որ մեր պատմական կինոթատրոնների և հատկապես վերջիններիս ինտերիերների հանդեպ կա

մեղմ ասած ոչ սրտացավ, երբեմն՝ անողոք վերաբերմունք, և սա աղետալի փաստ է, ինչը չի կարելի անտեսել:

Նորանկախ պետության կայացման դժվարություններից անմասն չէր նաև մշակույթը, փոխվեց դարը, հազարամյակը, ինչի հետ փոխվեց նաև մարդը: Մշակույթ ներթափանցեց նախկին խորհրդային արժեհամակարգին և տնտեսավարմանը օտարածին մի երևույթ «բիզնես» անվանումով, որը տարերայնորեն եկավ իշխելու, ինչն էլ իր հերթին արժեզրկեց ինքնին արվեստը՝ ենթարկելով իր պահանջներին ու չափանիշներին ամեն ինչ: Առավել ակնառու կերպով այն ազդեց դիզայնի և ճարտարապետության վրա, անողոք կերպով քանդվեցին և մասնավորեցվեցին բազմաթիվ մշակութային օջախներ, այդ թվում նաև կինոթատրոնները: Մարդու արագ հարստանալու ձգտումը հանգեցրեց մշակութային հուշարձանների անդառնալի կորստի: Իսկ միթե միայն չոր տնտեսական հաշվարկները պետք է թելադրեին այդ հուշարձանների ճակատագիրը, իհարկե բազմիցս տարբեր հարթակներում հաճախ կրկնվող այս հարցին այդպես էլ բավարարող և արդար պատասխան չտրվեց: Այդ հուշարձաններից շատերը այլևս առհավետ կորսված են:

Փորձելով համընթաց քայլել քաղաքակրթության հետ՝ հայկական շուկան չէր կարող անմասն մնալ ժամանակակից զարգացումներից. երիտասարդների շրջանում կինոյի հանդեպ աճող հետաքրքրությունը խթան հանդիսացավ արդի ճևաչափային կինոթատրոնի ստեղծմանը:

Առաջինը այդ մեծ քայլը արեց ռուսական կինոցանցը: Սինեմա Սթար անունը կրող ռուսական կինոցանցը նոր աշխուժություն հաղորդեց կինոթատրոնային մշակույթի առումով: Այսօր արդեն մայրաքաղաքում գործում են 3 և ավելի ընկերության մասնաճյուղեր: Մեր խնդիրն է բացահայտել այս նոր տիպի կինոթատրոնների ինտերիեր դիզայնի առանձնահատկությունները, որոնք մինչ այժմ առանձին ուսումնասիրության չեն արժանացել, մինչդեռ վերջիններս հանդիսանում են 21-րդ դարի կինոթատրոնային դիզայնի միտումների կրողները: «Սինեմասթարը» ռուսական կինոցանց է, որն առաջին անգամ հայաստանյան շուկա մտավ 2012-ին՝ բացելով բազմադահլիճ ներկառուցված կինոթատրոն «Դալմա գարդեն մոլ» առևտրի և ժամանցի կենտրոնում (ճարտարապետ՝ Հովհաննես Մութաֆյան): Կինոցանցը խոշորագույններից է Ռուսաստանում: Հաջորդ ներկառուցված կինոթատրոնը բացվեց Արաբկիրում գտնվող «Ռիո Մոլ» առևտրի կենտրոնում, 2017թ., երրորդը՝ 2019թ. հոկտեմբերին՝ «Մեգա Մոլ» ժանացի և առևտրի կենտրոնում՝ Նոր-Նորքի երկրորդ զանգվածում: Երեք կինոթատրոններն էլ առանձնանում են իրենց ոճային, գոտևորման, հորիվածքային տրամաբանությամբ:Նոր ինտերիեր դիզայնի մոտեցումներով, տեխնիկական հագեցվածությամբ կինոթատրոնները լավ օրինակ ծառայեցին հայկական նոր կինոցանցի ստեղծման համար և ահա Երևան մոլ առևտրի և ժամացի կենտրոնում բացվում է Կինոպարկ կինոթատրոնը՝ անկախ Հայաստանի առաջին հայկական կինոցանցը: Կինոթատրոնի ինտերիեր դիզայնը կատարվել է 2015թ. «Արխանգել» ճարտարապետական ստուդիայի կողմից: Իր տիպով կինոթատրոնը ներկառուցված է, այսինքն գտնվում է առևտրի կենտրոնի շինության մեջ՝ զբաղեցնելով ժամանցային հատվածի համար նախատեսված

մասը: Կինոթատրոնը գտնվում է «Երևան մոլ» առևտրի կենտրոնի առանձնացված հատվածում, երկրորդ հարկում՝ զբաղեցնելով մոտ 2300մ քառ. մակերես: Դահլիճները պայմանականորեն կարելի է կոչել «կարմիր» և «կապույտ»: Կինոպարկի երկու մեծ դահլիճները նախատեսված են 119 հանդիսատեսի համար: Հատակագիծն ուղղանկյուն հստակորեն շեշտադրված ուրվագիծ է: Դահլիճի կենտրոնական մասը կազմում է պարտերը, որը ունի քառակուսիաձև դասավորվածություն և չունի ընդհատումներ երկայնական առանցքի ուղղությամբ: Կինոդահլիճները զուրկ են նաև օթյակներից:

Անդրադարձ կատարելով մարզային կինոթատրոնների փորձին կարելի է նշել երկու նորաբաց կինոթատրոն. «S'Unique» և Քաջարան Սինեման: «S'Unique» կինոթատրոնը գտնվում է Կապան քաղաքի «Կապան մոլ» առևտրի և ժամանցի կենտրոնի վերջին՝ չորրորդ հարկում: Ներկառուցված կինոթատրոնը կառուցվել է 2018-ին, ընդամենը երեք ամսվա ընթացքում: «S'Unique»-ի ուղղանկյուն կինոդահլիճը նախատեսված է 84 հոգու համար, բաղկացած մեկ միասնական շարքից: «Քաջարան Սինեմա»-ն կառուցվել է նույն ժամանակահատվածում՝ 2018-ին, իրենից ներկայացնում է Քաջարանի մշակույթի պալատում ներկառուցված կինոթատրոն: Ի տարբերություն «Սյունիք» կինոթատրոնի Քաջարանի կինոթատրոնը կառուցվել է նախկինում գործող դիտադահլիճի հիմքի վրա՝ պահպանելով դահլիճի դասական ոճի տարրերը, ինչպիսիք են քիվի և երիզի մասը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի կինոթատրոնների ինտերիերների առանձնահատկությունները մեծապես ձևավորվել են խորհրդային ճարտարապետագեղարվեստական ընդհանուր դպրոցի, սկզբունքների և հայ ազգային մշակույթի յուրօրինակ համադրման արդյունքում: Ընդհանուր սկզբունքներ ասելով՝ ի նկատի ունենք ոճային, գեղարվեստական, կոնստրուկտիվ, էրգոնոմիկ, հայեցակարգային, տիպաբանական և այլ առանցքային խնդիրները: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև դրանց թերությունները, և վերջիններիս հաղթահարման արդյունքում ձեռք բերված խմբային կամ անհատական աշխատանքի նվաճումները և այլն: Արդի ժամանակաշրջանում վերոնշյալին գումարվում է ՀՀ-ում այժմ գործող ռուսական և արևմտաեվրոպական կինոցանցի փորձը:

Հանրագումարի բերելով վեր կատարված ուսումնասիրությունները՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

Հայկական կինեմատոգրաֆիայի զարգացմանը զուգընթաց սկիզբ դրվեց նաև դիտադահլիճային շինությունների նոր տիպի՝ կինոթատրոնի, զարգացմանը: Հայկական առաջին կինոթատրոնների զարգացման փուլը ըստ էության սկզբնավորեց 20-րդ դարի սկզբին, ինչը իր հերթին ձևավորեց կինոհանդիսատեսի նոր մշակույթ: Հայկական առաջին կինոթատրոնների արխիվային նյութերի հավաքագրումը բացառիկ կարևորություն ունի ոչ միայն ինտերիեր դիզայնի, ճարտարապետական տեսանկյունից, այլ նաև պատմական փաստերի հավաքագրման և վերհանման տեսանկյունից:

Հայաստանյան կինոթատրոնների կառուցման խորհրդային փուլը առանցքային նշանակություն ունեցավ հայաստանյան կինոմշակույթի

ձևավորման հարցում: Ինտերիերային լուծումները փոփոխվեցին ըստ ժամանակային պահանջների. սկզբում հեղինակները փորձեցին ստեղծել հորիվածքային ներդաշնակություն ինտերիերի և էքստերիերի միջև՝ միաժամանակ ձգտելով ինտերիերը դարձնել առանձին կարևոր երևույթ՝ չթերագնահատելով նրա դերը:

«Մոսկվա» կինոթատրոնի ձմեռային շենքը, որն առ այսօր մնում է հայկական կինոարվեստի խորհրդանիշներից մեկը, Խորհրդային Հայաստանի առաջին մանրամասնորեն մշակված և կազմակերպված կինոթատրոնի ինտերիեր դիզայնի լավագույն օրինակներից մեկն է: Ըստ էության, վերջինս դարձավ խորհրդային ինտերիեր դիզայնի լավագույն օրինակը և կարելի է ասել ուղեցույց ծառայեց այլ ճարտարապետների համար ողջ Խորհրդային Միությունում: Այդ ամենի վառ ապացույցն է այս կինոթատրոնի վերաբերյալ բազմաթիվ աղբյուրներում հանդիպող վերլուծական հոդվածները, որոնցում մասնավորապես մատնանշվում էին ինտերիերի և հորինվածքի գրագետ լուծումները:

Խորհրդային փուլը հետաքրքրական է նաև նեոդասական, կոնստրուկտիվիստական, մոդեռնիստական ոճերի շինությունների ստեղծումով և շատ դեպքերում էլ՝ դրանց դեմ պայքարով, ինչպիսիք են Վանաձորում «Երևան» կինոթատրոնի շենքը, Երևանում «Սասունցի Դավիթ», «Նաիրի» կինոթատրոնները և այլն: Երբեմն այդ պայքարը դառնում էր վտանգավոր, հաճախ հենց քաղաքական գրաքննությունն էր որոշիչ դեր խաղում այդ ոճերի կիրառման կամ դրանցից հրաժարվելու հարցում, ինչը բնականաբար իր հերթին խանգարում էր արվեստագետներին ազատ և անկաշկանդ արտահայտել ու կյանքի կոչել իրենց մտահղացումները և գաղափարները: Անմասն չէր նաև այդ կինոթատրոնների ինտերիեր դիզայնը, որը ևս ենթարկվում էր որոշակի ընդունված չափանիշների, և անգամ տեխնիկական հարցերում կարելի է նկատել, թե ինչպես քաղաքական թելադրանքը կարող է ազդել ամենափոքր մանրուքների՝ ընդհուպ մինչև էրգոնոմիկ պահանջների վրա: Սակայն, չնայած այս կաշկանդող հանգամանքներին, հայ վարպետներն ապացուցում էին, որ ցանկացած ոճի և գաղափարախոսության գերիշխանության պայմաններում կարելի է գտնել հնարավորություններ սեփական, երբեմն՝ բավականին համարձակ ու նորարարական, երբեմն էլ՝ ազգային ու հոգևոր մշակույթի ակնհայտ երանգավորում ունեցող գաղափարները քարի և ծավալի հիասքանչ ստեղծագործությունների վերածելու՝ զերծ մնալով կեղծ և արհեստական արտահայտամիջոցներից ու պաթոսից: Այս շրջանում են վարպետանում և կայանում այնպիսի ճարտարապետներ, ինչպիսիք են Գևորգ Թամանյանը, Գևորգ Քոչարը, Տիրան Երկանյանը, Գրիգոր Աղաբաբյանը և այլք:

1970թ.-ի խորհրդային կինոթատրոններում լայնէկրանի ձևաչափի կիրառումը փոխեց կինոթատրոնների ինտերիերների տրամաբանությունը: Հրաժարվելով տիպային նախագծից՝ այսուհանդերձ նախապատվությունը տրվում էր անհատական նախագծերին և յուրօրինակ լուծումներին, որի վառ ապացույցը դարձավ «Ռոսիա» կինոթատրոնը: Այն նոր խոսք էր որպես մի վայր, որը ոչ միայն կինոթատրոն էր, այլ նաև հսկա ժամանցային համալիր:

Առավել հետաքրքրական է ինտերիերային համարձակ, այդ շրջանում դեռ նորություն հանդիսացող բրուտալիստական մոտեցումը, որը համարձակորեն համադրվում էր ազգային հոգևոր ճարտարապետության և ոճավորման հետ: Չվախենալով քննադատությունից՝ հեղինակները փորձեցին սինթեզել այս երկու՝ առաջին հայացքից ոչ մի ընդհանուր եզր չունեցող ոճերը և հաջողեցին: Տվյալ ժամանակահատվածի կինոթատրոններն առավել ընդգրկուն և մեծ դահլիճներ ունեն և առհասարակ աչքի են ընկնում մոնումենտալ լուծումներով («Ռոսիա», «Արագած»): Հեղինակները փնտրում էին տարբերակներ ավելի ռացիոնալ և բազմաֆունկցիոնալ մոտեցումների: Մոտեցում, որը կանխորոշում էր հետագա հետխորհրդային կինոթատրոնների ձևավորման միտումները:

Խորհրդային Հայաստանի անկախացումից հետո տևական ժամանակ Հայաստանը ուղղակի կտրված էր արտաքին աշխարհի ռիթմից, ինչը բնականաբար ազդեց նաև կինոթատրոնների կառուցման և դիզայնի վրա: Կինոփառատոների անցկացումը, ինչպես նաև, հանդիսատեսի պահանջարկը, ստեղծեցին հնարավորություն կրկին անդրադառնալ կինոթատրոն կառուցելու մտքին:

Նոր աշխուժություն առաջացրեց 2012թ. Ռուսական հայտնի կինոցանցի մուտքը հայկական շուկա՝ խթանելով մրցակցություն, որի արդյունքում կառուցվեց նորանկախ Հայաստանի առաջին կինոթատրոնը՝ «Կինոպարկը»: Ինտերիերների դիզայնը չէր կարող անմասն մնալ այս նոր միտումներից: Նորընծա կինոթատրոնների ինտերիեր դիզայնը լիովին տարբեր է, նոր մոտեցումներով, համարձակ հետաքրքրական լուծումներով, նորագույն տեխնոլոգիաների և նյութերի կիրառմամբ: Երիտասարդ հեղինակները և դիզայն ստուդիաները փորձում են խուսափել մեծ և ընդգրկուն կինոդահլիճից՝ հաշվի առնելով այցելուների քանակի նվազումը և պահանջարկը, այլևս նախապատվությունը տրվում է միայն ներկառուցված տիպի կինոթատրոնների կառուցմանը: Այս կետերին գումարվում են նաև ժամանակակից ոճական լուծումները, նոր հետաքրքիր արահայտամիջոցների փնտրտուքը, ինչպես Սինեմա Սթար կինոթատրոնի երևանյան նոր մասնաճյուղը, «Հայաստան» կինոթատրոնի նոր լուծումները: Այդ համառ փորձերը ի վերջո տալիս են պտուղներ՝ վերածվելով հաջողակ նախագծերի, ինչպես օրինակ «Մեգամոլ» առևտրի կենտրոնում գործող «Սինեմա սթար» կինոթատրոնը, որը զարմացնում է բացառիկ և չկրկնվող ինտերիերային լուծումներով: Հրաժարվելով ավանդական գոտևորումից՝ հեղինակները խիզախել են ծավալների և գույների միջոցով վերացնել ճեմասրահի և օժանդակ գոտիների միջև սահմանները՝ ստեղծելով բարդ, բայց միաժամանակ հարմոնիկ միջավայր:

Այսօր հայ հանդիսատեսը չի կորցրել հետաքրքրությունը կինոթատրոնային մշակույթի և երևույթի հանդեպ, սակայն այսօրվա հանդիսատեսը ունի իր պահանջները և իր պատկերացումները, թե ինչպիսին պետք է լինի առհասարակ 21-րդ դարի կինոթատրոնը, իսկ հայաստանյան նորընծա լավագույն կնոթատրոնները ըստ ամենայնի փորձում են համաքայլ ընթանալ ժամանակի ինտերիերի դիզայնի նորագույն և նորարարական պահանջներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Միքայելյան Ռ.,** Գյումրի քաղաքի «Հոկտեմբեր» կինոթատրոնի ինտերիեր դիզայնը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2021, N 1, էջ 171-176:
2. **Միքայելյան Ռ.**, Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնի արդիականացումը ՀՀ անկախության տարիներին, «Գեղարվեստի ակադեմիայի Տարեգիրք», 2021, N 2, էջ 85-95:
3. **Միքայելյան Ռ.**, «Նաիրի» կինոթատրոնի ինտերիեր դիզայնը, «Գիտական Արցախ», 2022, N 2 (13), էջ 242-247:
4. **Միքայելյան Ռ.**, Հայաստանյան առաջին կինոթատրոնների ինտերիեր դիզայնը, «Գիտական Արցախ», 2023, N 1 (16), էջ 119-125:
5. **Միքայելյան Ռ.,** «Այրարատ» կինոթատրոնի ինտերիեր դիզայնը և առնչությունները եկեղեցական ճարտարապետության հետ, «Հոգևոր Շիրակ. պատմական ուղի և արդիականություն»՝ նստաշրջան նվիրված Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի 100-ամյակին (17-18 նոյեմբերի, 2020), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, էջ 293-300:
6. **Միքայելյան Ռ.,** Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1960-1970 թթ., Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանի նյութեր, 15, N 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2023, էջ 94-104:
7. **Միքայելյան Ռ.,** Միջնադարյան բազիլիկների վերարտադրումը «Ջերմուկ» և «Էջմիածին» կինոթատրոնների ճարտարապետության մեջ և ինտերիեր դիզայնում, Երիտասարդ արևելագետների 41-րդ գիտաժողովի նյութեր, նվիրվում է պ.գ.թ., պրոֆեսոր Արտակ Մովսիսյանի հիշատակին, Հուլիսի 9, 2021), Երևան, «Վառմ» հրատ., 2021.էջ 351-357:
8. **Микаелян Р.,** История развития архитектуры и интерьера армянских кинотеатров, «Международный журнал гуманитарных и естественных наук», 2022, N 1-1(64), с. 84-87.
9. **Микаелян Р.,** Проявление особенностей восточной архитектуры в интерьерах и экстерьерах кинотеатров Армении, Центральной Азии и Ближнего Востока, «Научный Аспект», 2021, N 2, Том2, с. 235-241.
10. **Микаелян Р.,** Дизайн интерьера кинотеатра Москва, «Научный Аспект», 2021, N4, Том 4, с.1 54-160.
11. **Mikayelyan R**. Jermuk cinema interior design, European science, 2021, № 3 (59), p. 57-59

РУЗАННА ТИГРАНОВНА МИКАЕЛЯН
ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРОВ АРМЕНИИ

Резюме

Диссертация посвящена истории кинотеатров, построенных в Армении, начиная с самых ранних и до наших дней, анализу ярких образцов их интерьеров. В первой главе обобщены описания интерьеров кинотеатров, построенных с конца XIX века до установления советской власти; сведения о строительстве и детали оформления интерьеров кинотеатров Советской Армении, построенных с момента установления советской власти. Вторая глава диссертации посвящена кинотеатрам, построенным до 1970-го года. Этот период очень важен с точки зрения формирования общих принципов дизайна кинотеатров. Молодые архитекторы, работавшие в то время (Г.Кочар, Т.Ерканян и другие) пытались найти новые методы для внедрения понятий театрального зала и кинозала, в том числе для дизайна интерьеров. Приведены примеры популярных кинотеатров своего времени, в частности кинотеатр «Москва» (г. Ереван), кинотеатр «Наири» (г. Ереван), кинотеатр «Октембер» (г. Гюмри), а также более поздние, такие как «Комитас» (г. Ереван), «Арагац» (г. Ереван).

В третьей главе рассматривается следующая стадия развития дизайна кинотеатров Армении, в частности - периода от 1970 и до 1991 года, который примечателен тем, что именно в это время архитектурный стиль модернизм становится актуальным и доминантным в СССР. Это безусловно касается дизайна интерьеров армянских кинотеатров, таких как «Россия» (г.Ереван), «Гарун» (г. Эчмиадзин, Армавирский марз), и т.д.

Последняя – четвертая глава посвящена дизайну интерьеров встроенных кинотеатров Армении в период независимости (от 1991 г. и до сих пор), таких как «Кинопарк» (г. Ереван), «Синема Стар» (г. Ереван), «Каджаран синема» (г. Каджаран, Сюникский марз), «S'unique" (г. Капан, Сюникский марз).

Работа охватывает довольно широкие географические рамки и хронологический промежуток, что позволяет исчерпывающим образом изучить практику оформления их дизайна. Относительно международного опыта, необходимо указать, что в первой главе изучены кинотеатры Европы, США, СССР, а также стран СНГ; та же глава охватывает вопросы типологических особенностей и перспективы будущего зрительных залов. Касательно изучения отдельных кинотеатров, нужно отметить, что был произведен детальный анализ зонирования всех кинотеатров, в частности, отмечена важность зоны кинозала, являющегося основой любого кинотеатра. В диссертации затрагиваются как известные и давно полюбившиеся зрителю кинотеатры, так и менее известные.

Научная новизна диссертации состоит в следующем:

1. Кинотеатры Армении были сгруппированы по хронологии их создания, по назначению и степени сохранности. Нужно отметить, что 70

процентов из них находятся на грани исчезновения, некоторые прекратили свое существование уже во время написания данной диссертации («Наири»), что еще раз доказывает важность данной работы. Данный труд можно считать попыткой уловить последние частички исчезающего наследия прошлого, показать их высокую ценность и значимость.

2. Руководствуясь международным опытом подобных исследований и устоявшимися подходами, были изучены вопросы типологии, композиции, концепции, эргономики, развития акустического оформления интерьеров кинотеатров Армении.

3. Рассмотрены перспективы технологической модернизации и развития кинотеатров Республики Армения.

4. Интерьерные решения кинотеатров Республики Армения и их особенности были рассмотрены и сопоставлены с образцами подобных решений своего времени (Европа, США, СССР, и т.д.).

5. На основе хронологического принципа были оценены преимущества и недостатки кинотеатров, в отношении последних был сделан комплексный анализ.

6. Данное исследование по-новому раскрывает и вводит в научный оборот документальные архивные материалы о некоторых кинотеатрах, сведения и детали, которые до этого не представлялись или не анализировались в научном свете.

7. Впервые были комплексно изучены и представлены кинотеатры, основанные в течение 2012-2019 гг.

Изучая и оценивая прошедший путь развития национальной архитектуры и дизайна, можно определенно отметить, что особенности интерьеров кинотеатров Армении во многом сформировались в результате уникального сочетания советской архитектуры и армянской архитектурно-художественной школы, принципов армянской национальной архитектуры и дизайна. Под общими принципами мы подразумеваем стилистические, художественные, конструктивные, эргономические, концептуальные, типологические и другие ключевые особенности. В этом контексте следует учитывать и недостатки данных особенностей, а также достижения в результате работы групп авторов или индивидуальных авторов, которые были сделаны в результате преодоления данных недостатков. Наряду с развитием армянского кинематографа началось также и строительство нового типа зрительного здания – кинотеатра. Первый этап развития армянских кинотеатров по существу начался в начале 20-го века, что, в свою очередь, сформировало новую зрительскую культуру. Собирание архивных материалов, относящихся к первым армянским кинотеатрам имеет исключительное значение не только с точки зрения изучения дизайна интерьера и архитектуры, но и с точки зрения восстановления и анализа исторических фактов. Советский этап строительства армянских кинотеатров имел ключевое значение в становлении армянской кинокультуры. Для современного периода к вышесказанному можно добавить опыт российской и западноевропейской киносети, действующей в настоящее время в Республике Армения.

MIKAYELYAN RUZANNA TIGRAN
INTERIOR DESIGN OF CINEMA THEATERS IN ARMENIA
Summary

This dissertation is dedicated to the history of cinema theaters that have been built in Armenia starting from the earliest ones to those founded in our times, the analysis of their outstanding interior designs.

The Chapter 1 of the dissertation contains descriptions of construction as well as interior design features of the cinema theaters built from the late 19th century to the establishment of the Soviet rule; construction and interior features of the cinema theaters of the Soviet Armenia built from the moment of establishment of the USSR.

The Chapter 2 is dedicated to the cinema theaters built until 1970. This period is very significant from the viewpoint of forming of the general principles of cinema design. Young architects of their time (G.Kochar, T. Yerkanyan and others) were attempting to seek new methods for introducing the concept of theater hall and cinema hall, including for the interior design. Examples of popular cinema theaters of their times are given, particularly for such cinemas as Moscow (Yerevan), Nairi (Yerevan), Hoktember (Gyumri) as well as for those built in later period such as Komitas (Yerevan), Aragats (Yerevan).

The Chapter 3 examines the subsequent development stage of interior design of the cinema theaters of Armenia, particularly for the period from 1970 to 1991 which is remarkable by the fact that especially in this period the architectural style called modernism has emerged as actual and dominant in the USSR. This is definitely true for the interior design for such Armenian cinema theaters as Russia (Yerevan), Garoon (Etchmiadzin, Armavir marz), etc.

The Chapter 4 which is the last chapter of the dissertation, explores the interior designs of the built-in cinema theaters of Armenia that have been constructed in the independence period of Armenia (1991 to date): these are cinema theaters such as Kinopark (Yerevan), Cinema Star (Yerevan), Kajaran Cinema (Kajaran, Syunik marz), S'yunique (Kapan, Syunik marz).

The work covers a quite wide geographical area and chronological period allowing a study of their interior design practice in comprehensive way. As for international experience, it is necessary to mention that the first chapter discusses cinema theaters built in Europe, USA, USSR, the CIS countries; the same chapter covers the issues of typological characteristics and perspectives of future viewing halls. As for the study of particular cinema theaters, it is possible to mention that a quite detailed analysis of zoning of all theaters was made, and specifically the importance of the viewing hall, that is the most important structure of any theater, was emphasized. The dissertation touches upon not only the famous cinemas that became popular among the spectators long time ago but also the less famous ones. Modern cinemas that are fully novice for spectators are grouped separately; for the first time they, that were able to become highly competitive within a short time, are covered scientifically. These are three built-in cinemas representing Russian

Cinema Star network as well as those belonging to the Armenian Kinopark company.

The scientific novelty of the dissertation is as follows:

1. The Armenian cinemas have been grouped as per chronological order of their establishment, their purpose and the degree of preservation. It should be mentioned that 70 per cent of them are balancing on the brink of disappearance, moreover some of them ceased to exist when this study was being carried out (Nairi) that once again proves the importance of this work. This study can be considered as an attempt to catch the last pieces of the fading heritage of the past, appreciating their significance and high value as well as making them more visible.

2. Being guided by international experience of similar works and best practice, the issues of typology, composition, ergonomics, development of acoustic configuration of the interiors of the Armenian cinemas have been studied.

3. The dissertation examines the perspectives of technological modernization and development of the cinemas of the Republic of Armenia.

4. Interior solutions and characteristics of the Armenian cinemas are reviewed and compared with similar solutions of their time (Europe, USA, USSR, etc).

5. Based on chronological principle, advantages and disadvantages of the cinemas are reviewed; a complex analysis is performed in regards of the latter.

6. This study discovers anew documental archive materials concerning some cinema theaters, introduces them in the scholarly discourse; these details have not addressed and analyzed so far scientifically.

7. Cinema theaters founded during 2012-2019 have been studied and brought to the audience's attention for the first time ever.

Studying and assessing the past path of development of national architecture and design development, one can definitely mention that the features of the Armenian cinemas interior design were largely formed as a result of a unique combination of Soviet architecture and the Armenian art school, the principles of Armenian national architecture and design. By general principles we mean stylistic, artistic, constructive, ergonomic, conceptual, typological and other key features. In this context, the shortcomings of these features should be taken into account, as well as the achievements as a result of efforts by author groups or individual authors in the course of overcoming these shortcomings. Along with the development of Armenian cinema, the construction of a new type of viewing hall, the cinema theater, also began. The first stage of development of Armenian cinema theaters actually started at the beginning of the 20th century, which, in its turn, formed a new spectator culture. Gathering of archive materials relating to the first Armenian cinemas is of exceptional importance not only in terms of interior design and architecture study, but also for restoration and analysis of historical facts. The Soviet stage of Armenian cinema theater construction was of key importance for formation of the Armenian film culture. For the modern period, the practice of Russian and European cinema networks currently operating in the Republic of Armenia also can be added.